

“ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ, ՄԻՈՒԹԻՒՆ

“Հանդէս Ամսօրեայի, խմբագրութիւնը իւր նպատակին՝ հայկական ուսմանց զարգացման ծաւալման աւելի արդիւնաւէտ ծառայելու համար՝ Ուսումնաթերթին հիմնարկութեան օրէն սկսած ծնունդէն եւ կառուցանել “Ազգային Մատենադարան, մը, մատենաշարք մը ազգային-գիտական-քանասիրական ուսումնասիրութեանց, որուն հատորներն կը կազմուէին մեծաւ մասամբ Ուսումնաթերթին մէջ հրատարակուած ընդարձակ յօդուածներու սնոհովից կամ՝ յաւելումներով մոխացած արտատպութիւններով: Երկնացա 35 տարիներու կը թուէ “Մատենադարանի իւր շարքին մէջ 90 հատոր, որ քիչ ետքը պիտի քարծրանայ 100ի: Ընդհանրապէս ծառայութիւնները մատուցին հատորներս հայկական ուսմանց զարգացման: Աշխատութիւններ, որոնք “Հանդէս մէջ թագնուած անմատչելի պիտի մնային ընդարձակ շրջաններու, շուտով հասարակաց ուշադրութեան արժանացան եւ իրենց շահաւէտ արդիւնքն յառաջ բերին:

Աւելի միշտ՝ տալու համար ծնունդութեանս եւ ասով հայկական ուսմանց պայծառութեան խորհեցաւ խմբագրութիւնս ձեռն ի ձեռն գործակցութեամբ հայ գրականութեան զարգացման փարոզներու հիմնել “ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ, ՄԻՈՒԹԻՒՆ մը, որուն նպատակն ըլլայ՝

Դիւրութիւն ընծայել հայ բանասերներու “Ազգային Մատենադարանի, շարքերուն մէջ հրատարակել քերէզ ինքնուրոյն կամ թարգմանածոյ աշխատութիւններ ազգային ուսմանց վերելքէն, պատմական, լեզուագիտական... հետազոտութիւններ, հրատարակութիւններ նախնական անտիպ մանր մագորդներու եւն, որոնք պատրաստութիւն պիտի ըլլան նախնեաց Մատենադարանի թեան ընտանի հրատարակութեան, զոր յանձն առած է յոյս ընծայել “Արամեան Ընկերութիւնը:

“Միութեան, վարչութիւնն պիտի գտնուի “Հանդէս Ամսօրեայի, խմբագրութեան ձեռքը:

“Միութեան, անդամագրուելու պայմանները:

ԺԱՆ՝ Միայն “Հանդէս Ամսօրեայի, բաժանորդները կրնան անդամակցիլ:

1. Ժամանակաւոր անդամը կը վճարէ “Հանդիսի, բաժանորդագնոյն վրայ 10 ֆր. յետոյ լուած մը (= 30 ֆր.) եւ կ'ունենայ իրաւունք նոյն տարին Սիւլթեան հրատարակած հատորները ստանալու:

2. Մշտնջենաւոր անդամ է անիկա, որ միանուագ 300 ֆր. կը վճարէ Սիւլթեան, որով կ'ունենայ իրաւունք ցկեանս ստանալու “Հանդէս Ամսօրեայի, եւ “Ազգային Մատենադարանի, հատորները:

3. Պատուոյ Անդամ՝ կ'ըլլայ անիկա, որ միանուագ 500 ֆր. կը վճարէ “Միութեան, եւ կ'ունենայ իրաւունք ստանալու “Հանդէս Ամսօրեայի, եւ “Ազգային Մատենադարանի, հատորները:

ԳՈՐԺԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ “ՀԱՆԴԻՍԻ,

1. RR. PP. MÉCHITHARISTES de Vienne, Constantinople, Pancalide.
2. RR. PP. MÉCHITHARISTES de Vienne, Smyrne.
3. M. F. KHANDJIAN, Sikka Guédid, Alexandrie — Egypte.
4. M. MARDIROUS BALAYAN, Survey of Egypt, Giza.
5. M. V. H. ALTUNIAN, R. C. 486, Fresno, Calif.
6. M. H. G. BERBERIAN, 837 Washington St., Boston, Mass.
7. M. A. AVAKIAN, 230 Avenue Rogier, Bruxelles.